

ազնուականները սեփական գիւղատնտեսութիւն ունէին և իրենց կալուածքները վրայ աշխատեցնում էին գիւղացիներին: Նոյն իսկ Թագաւորն էլ ունէր իւր սեփական տնտեսութիւնն. այսպէս՝ խաղողի այգիներ, ոչխարի և եղջիւրաւոր անասունների հօտեր և այլն¹:

(շարունակուի)

Հ. Մուսաէլեան



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

Շարունակութիւն

Անցները, երբ քաղաքային ազգաբնակչութիւնը չատ թոյլ է զարգացած, այն ժամանակ գիւղական ազգաբնակչութեան մեծ մասը իւր կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ չէ կարողանում իւր բերքերի համար սպառողներ գտնել: Եթէ գիւղացին իւր կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ աւելացածը մտածէ պահել, ոչ մի օգուտ չի ստանայ. նախ այն պատճառով, որ այդ բերքերը միւս գիւղացիներին պէտք չեն գայ, որովհետեւ նրանք էլ ունեն, և երկրորդ, որ նոյն բերքերը կարճ ժամանակից յետոյ կարող են փչանալ: Սրանից առաջամհու է փակ տնտեսութեան ժամանակ գիւղացու առատաձեռնութիւնը: *) Այս առատաձեռնութիւնը կրացակայէր, եթէ քաղաքային ազգաբնակչութիւնը բաւականաչափ զար-

1) Dagbaschean, H. a. a. O. եր. 402.

*) Նման կարծիքի ենք հանդիպում յայտնի սոցիոլոգ-պատմագէտ Կ. Կաուցկու մի նոր աշխատութեան մէջ, որտեղ խօսելով հին հռովմայեցոց հարուստների մասին նկատում է, «Հարստութեան կենդրոնացումը մի քանի ձեռքերում ցոյց էր տալիս ոչ թէ այն, որ արտադրական ոյժերը զարգացել են, այլ այն, որ հաճոյք ստանալու միջոցները հաւաքուել են այնպիսի առատութեամբ, որ առանձին անհասր հնարաւորութիւն չունէր ինքը սպասելու, եւ նրան ոչինչ չէր մնում անելու, բայց եթէ բաժանել նրանց, ուրիշների հետ: Հռովմեական կայսրների ժամանակ առատաձեռնութիւնը ամենաեղեւիլի առաքինութիւններից մէկն էր համարւում»: Карлъ Каутский, «Античный миръ, іудейство и христіанство», пер. Н. Рязанова, СПб, 1909. եր. 340.

գաղափար լինէր, որովհետեւ գիւղացին տեսնելով, որ իւր բերքերը սպառողներ են գտնոււմ, կաշխատէր վաճառելով օգուտ ստանալ, մի երևոյթ, որ պարզ նկատոււմ է ժամանակակից գիւղերում, որտեղ ակնյայտնի կերպով հաղուադէպ են նախկին լիւթիւնն ու առատաձեռնութիւնը, Ահա թէ ինչպէս է նկարագրոււմ վիպասանը գիւղացու առատաձեռնութիւնը.

«Եւրանի ետէն էլ նրանց դռնովը անց կենար, իրանք թեւիցը կքաշէին, տուն կկանչէին, որ նրանց սուփրի համն առնի ու էնպէս ճանփայ ընկնի, Շատ անգամ եկեղեցումը որ մէկ զարիբ օքմին կտեսնէին, «Սուրբ սուրբն» ասածին պէս շատը կերթար եկեղեցու դուռը կկաղնէր, որ սփթա ինքը նրան իւր տունը տանի, ու շատ անգամ, երբ ուղողը շատ կըլէր, խօսքը մին կանէին, որ մէկ երկու շաբաթ նրան իրանց միջումը պահեն, նրան քէֆ շահնց տան ու բոլորն ի միասին՝ մէկ օր սրա տանը, մէկ օր նրա՝ ուրախութիւն անեն, զարիբի սիրտն առնեն, . . . էնպէս մարդ կար, որ տարէնը էրկու հարիր, երեք հարիր իտր տանձ, խնձոր, ծիրան ծախոււմ էր ու մէկ էնքան էլ աղքատի ու ճամփորդի ուտացնոււմ, եւ դեղապետի համար պահոււմ, որ սարի աղքատ խալիսը—թուրք, հայ չունքի բաղ չունին, մէկ հիւանդ պատահելիս գան տանին ու իրանց թամարդու նաչաղի աչքը դռանը չմնայ, . . . Ամեն մարդ իւր բաժակի գինին ալհադդա ունէր պահած, որ համ իր եկեղեցուն էր տալիս, համ էն գեղըցոնց բաժանոււմ, ուր տեղ բաղ չկար, որ նրա ննջեցելոց հոգին յիշեն, Ամեն նաւակատեաց՝ ոչխար ասես, կով ասես, մորթոււմ, մատաղ անոււմ, ժամ, պատարագ անել տալիս, ժամոց բաժանոււմ ու տանով տեղով գնոււմ իրանց սիրելեաց գերեզմաններն օրհնել էին տալիս ու աղքատներին կշտացնոււմ».

Գիւղի ազգաբնակչութեան նկարագիրը բաւական համարելով հարց տանք, թէ արդեօք այս երեք դասարկարգերից որը կարող էր գրաւել գրչի մարդկանց ուշադրութիւնը թէեւ, ի հարկէ, կգտնուէին մարդիկ, որոնք

Աշարունակէին իրենց հին երգը երգել ու հայոց գրականութիւնը «հարստացնել» կեղծ-կլասիկ երկերով, որոնց նորատակը հին հայ կեանքի—ազնուականութեան ու հոգեոր դասի տիրապետութեան շրջանի պատկերացումը և ջատագովումն էր, —այնուամենայնիւ հոգեորականութեան անկեալ դրութիւնը կստիպէր գրողներին մի մասին ուշ դարձնել միւս երկու դասակարգերի վերայ: Բայց որովհետեւ վաճառականութեան անզարգացած դրութիւնը չէր կարող դեռ ևս երևան հանել այդ տիպի տնտեսութեան ու մարդկանց դրական կողմերը, այլ, ընդհակառակը, առևտրական ներկայացուցիչների բացասական կողմերով վանիչ ազդեցութիւն պիտի գործէր, — ուրեմն բնականաբար ուշադրութեան գլխաւոր առարկան պիտի լինէր գիւղացիութիւնը:

Եւ իրօք, շուտով գիւղացիութիւնը ներս խուժեց գրականութեան մէջ:

V

Գիւղացիութեանը գրականութեան մէջ տեղ տուող հեղինակների կարապետն էր Խաչատուր Աբովեանը:

Առաջին անգամն էր, որ բանաստեղծական գրուածքի հերոսը գիւղացին էր դառնում, և հեղինակը, ինչպէս մի պանօրամայի մէջ, ցոյց էր տալիս գիւղական կեանքը իւր տարբեր ներկայացուցիչներով ու տեսարաններով:

Ահա գիւղական եկեղեցին առաւօտեան ժամերգութեան ժամանակ, ժամաւորներով, ժամհարով, տէրտէրով, մզմանի երէցփոխանով ու շարութիւն անող երեխաներով:

Ահա գիւղացի կիներ կերակուր պատրաստելիս: Աթարի սեւ թանձր ծուխը դուռն ու երթիկը կալել, տունը մխի ծով է շինել, էնպէս որ մարդի աչքը առաջը չի կարում ջոկի: Երէկեքանց սուգ ու շիւանը գլուխ է տանում, քեալլա ծակում, Խեղճ տանտիկինը էնքան ծուխ է կուլ տուել, բռնոթի քաշել, փռշտացել, հազացել, որ սիրտն եկել է բողազին դէմ առել: Էնքան աչքերը տրտել է ու ազի արտասոււնք թափել, որ աչքի լիւսը թռել է, էն-

քան կուղէկուղ հաւկրի պէս ման է եկել, պուճախէ պուճախ ընկել, որ էլ մէջքը չէր կարում քաշել: Թունդիրն էլ քանի գնում, թէժանում է: Պղնձները զլթզլթալով եփ են գալիս...

Տեսարանը փոխուեց: — «Քեզխուդէքը գալիս են տօ, տեղ արէք, զրադ կացէք, ճամփայ բաց արէք» — ձէն է տալիս մէկ աչքը քօռ, դունչը ծուռը գզիր կոստանը: Մարդի քէֆը գալիս է տեսնելով, թէ ինչպէս տանուտէրն և քէթխուդէքանց շատը գդակները կոտրել, աջուականջի վրայ թեքել, իրանց հինգ ոչխարանի քուրքը քէֆով մէկ էս ուսին են քաշում մէկ էն ու բազի անգամ գլխներն էլ հետը դրմբացնում են, որ գդակները գծութիւն չանեն, իրանց չափը ճանաչեն ու դուզ կանգնեն: Սրանք բոլորը ժամից դուրս գալով գնում են տանուտէր Օհանէսի օդէն բարիկենդանի քէֆը անելու: Ճանապարհին իրար բռնոթի թաւազա անելով, կամ մէկը ձեռք միւսի գօտիկը կամ ճտովը քցած՝ իրանց էրէխութիւնը միտներն են բերել ու շախա անում, բոթբոթում, շուացնում, զռթկացնում, փռթկացնում, ճռթկացնում, մռթկացնում ու բազի վսխտ էլ հրհռում, քրքում, բըրբում, դրդում: Շատը հօ ծիծաղու մէջքը իլիկը կոտորուել է: Թագաւորն էլ էնպէս ուռած ուռած իր քոչք ու սարէն չի մտնիլ, ինչպէս մեր գեղի իշխանքը՝ իրանց տան դոմը...

Ահա տանուտէրի օդէն, Քէֆըները չաղացել է, դամաղները տաքացել, շունը տիրոջը կորցրել: Կրչոնց Վիրապն էլ հօ էստեղ է, ինչն է պակաս. սազը կողքին հազիր ունի, ականջ պտի, որ նրա ձէնին հայիլ մայիլ մնայ: Էնպէս զօռքա ձէն ունի Վիրապը, որ հինգ սհաթուայ ճամփից լսուում է: — «Փիր օլսան, փիր, ջանըմ սան, ջանըմ. ինչ կըլէր, որ քո մէրն քեզ նման մէկ հինգն էլ բերել ու աշխարհքի միջումը մի հատ չըլէիր: Ասա բերանիդ զուրբան, ասա, բերանդ ապրի, ըմբրով կշտանաս», — հազար տեղից ձէն են տալիս մեր պարոն քէթխուդէքը գլխները տրմբացնելով, անոշ անոշ զկռտա-

լով. Տես, քէֆը քոք ժամանակին տէրտէրն էլ իր ձէնի հունարն է ուղում նշանց տայ, ու կամ Վիրապի հետ բաս մտնում, գողում, կամ թէ չէ «երևեցաւ խնկաբերիցն» ասում, խալխի թասըները վէր դնել տալիս կամ ձեռքներին բանդ անում, ամա էնպէս մէկ մխոտ, ճոթ-ռած, ճղանի, քացախած ձէնով, որ մարդի գլուխը տեղից պոկ է գալիս: Քեդխուդէքը հօ մաջալ չեն տալիս, ինչ բերանները գալիս է, հէնց էն են քեօնդալանա ասում, էնպէս որ խեղճ սաղանդարի ասածը բերնումը հարամ է ըլում: Ամենը հօ ամենը, իլլահիմ՝ մեր մեղրաբերան տանուտէրը, անատամ՝ ռեխը որ բաց չի անում, պատերը դողում են, կատուները մլաւում, հաւերը քակումը իրանց տիրոջ ձէնը լսելով շարքով կանգնում, կրկում, եա կշկշում: Փորթ, եղը, ձի, տաւար ուղում են, որ ուրախութիւնից կապըները կտրեն: Խուլասան, չին գլուխդ ցաւացնեմ, էսպէս մուղիկի ու նաղրախանի ձէն շահի դռանն էլ չի լսուած...»

Մի ուրիշ տեսարան: «Կէս օր է. Արեգակն եկել, երկնքի մէջ տեղը բռնել է, օրուան փուշը մի քիչ կոտորուել, տաքացել է: Սար ու ձոր էրծաթի պէս փլվում են: Հէնց իմանաս թէ երկնքիցը մէկ աւետեաց ձէն է եկել, աշխարհս արքայութիւն է դառել և Քանաքոս խարաքէքն էլ են ծափ տալիս, էնքան տղամարդ, ջահէլ տղէրք, էրէ-խէք են տներիցը դուրս եկել, քուչէքումն ու կտրներին քէֆ անում: Ռհաթ խալխը, որը ձեռնաբռնուկ է արել, պար գալիս, որը բոլորել, շուրջ նստել, քէֆ անում, որը խաղ է ասում, որը դամ քաշում: Էստեղ զուռնէն է փչում, էնտեղ ճզալախտի են խաղում, միւս տեղը փահ-լեաններն են կոխ պրծնում, եա դարաչիքը փալ բաց անում: մանր տղերքն էլ եա ձնաթոփի խաղում, եա աշ-քակապուկ, եա սալդաթի պէս կոււում: Դափի, զուռնի ձէնն ու հարայ հրոցը աշխարհը են վերկալել:

Իսկ էս ուլ է, որ քեահլան ձին հեծած, իւր դաստէն եդեին քցած, մէկ տասը ձիաւորով անց է կենում գեղի միջով: Հէնց իմանաս, մէկ թագաւորի որդի է գա-

լիս: Եարադ ասպարը կապած, թուանքն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու դամէն գօտկումը, կանաչ մով շալուարը, զառկապէն հագին, գիւլքանդի աղլուխը ճտին, նուղայի թուխ գդակը գլխին կոտրել, աջու ականջի վրայ է քցել, ոսկեթել թուխ թուխ մաղերը ձախու կողմիցը քամու հետ խաղում, եա երեսին դիպչում, եա բլի տակովն ընկնում: Բեզերն ապրշումի պէս ոլորել, էնպէս է թշի վրովը դում տարել, որ ամեն մէկի մէկ ծէրը ականջներին են դիպչում: Մտիկ անողի խելքը գնում է: Գեղըցիք հէնց նրան տեսան թէ չէ, ծափ տուին, պար էկան, ձէն ձէնի տուին ու սկսեցին նրա խաղն ասել, նրա գովքն ածել ու նրա թասը խմել: Երիտասարդն էլ գդակով է անում, քաղցր երեսով գլուխ տալիս ու անց կենում:

— Տանուտէր Օհանէսի մեծ տղան է, Աղասին է, ջիւան Աղասին, որ իր քէֆն արել, պրծել, գնում է կալերի դղումը, ջաղացների մօտին իր հունարը նշանց տայ, ջիրիդ խաղայ:

Հեռււանց երևում է, թէ ինչ ղիամաթ է անում իգիթը: Զիու ականջը մտած՝ էնպէս է քչում, կրակին տալիս, որ հէնց իմանաւ թեաւոր դուշ ըլի: Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շարտում: ձին չափ է քցում ու գետնիցը ծուլ ըլելիս ձիու վրիցը բռնում է, էլ եդ քցում: Շատ անգամ հէնց էնպէս դուղ շարտում է, որ կրակի պէս եդեիցը հասնում, կալնում, էլ եդ ծուլ անում: Գետնին վէր ընկած տեղիցն էլ էնպէս է թամբի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում է, ընկերտանց վրայ էլ, որ վախտ վախտ ջիրիդ չի քցում, էնպէս է նշանում, որ գդակների ծէրին է դիպչում, կամ գդակը հետը տանում, որ իմանան, թէ նա նրանց ղմիշ չի անում: Շատ անգամ թամբի միջին ջուխտ ոտի վրայ կանգնած՝ էնպէս է ձին չափ քցում: «Ջանըմ սան, ջանըմ, Աղասի, մէրդ մէկ հատ ա քեզանից բերել. հազար տարի անց կենայ, քեզ նման մէկն էլա բհամ չի գալ», — ասում են թամաշաւորքն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս:

Բայց էն ինչ կսկծալի ձէն է, որ յանկարծ էս քէֆի միջումը լսուում է.— «Տարան, տարան, աստուածասէրք, մօտ եկէք, քոմակ արէք, գլուխս լացէք, տունս կոխեցին, օջաղս քանդեցին, աչքիս լիսը հանճում են, սիրտս դուս են ճոթուում, տօ մէկ հասէք, էնչ կըլի»...

Իսկ մի ուրիշը թուրքերէն ասում, հարբա է տալիս, որ ձէնը կտրի— «Ձէնդ կտրի, զանջըդ, դարաչի... հէնց էս սհաթիս փորդ վէր կածեմ, չինդեանութիւն ինչ պէտք ա, Սարգարի հրամանն ա, պէտք է ձեր աղջիկը քաշենք, տանենք, ինչ խօսք ունիք, ինչ կարողութիւն, Սարգարի հրամանին սարը չի դիմանալ, դուք ինչ կարաք անել»:

Հէնց բռնես մէկ ամպ տրաքեց, երկիրը շարժեց, եւ թօփի թօփխանի ձէն էկա, եւ երկիւնքը փուլ էկաւ: Խալխի գլխին ջուր մաղուեցաւ: Ամենքն էլ իմացան, թէ Սարգարի ֆառաշներն էկել են, որ Աթոյեկն աղջկան քաշին, ո՞վ հագդ ունէր, որ ծպտայ: Տղամարդկերանց որը վախլուկ էր գլուխն առաւ, կտրաւ, իսկ սրտն որ մի քիչ պինդ սիրտ ունեն, զարդանդելով, դողդողալով մօտ են եկել: Թէ ինչպէս են տանում խեղճ ջրատար աղջկանը: Ռանգ մօանգները թռած, սպրթնած՝ եկել, մեռելի պէս շարուել են տան բաշին: Շատի լեզուն բերնումը շաղուել, փէտացել է: Շատի լերդն ու թոքը ջուր է կտրուել, շատի պռօշները ահու ճաքել, արիւնը շոռալով գնում է:

Ինչ խեղճ, ողորմելի մէրն է անում, Աստուած հեռու տանի: Քար չի մնացել, որ գլխին չխփի, հող չի մնացել, որ վրէն չածի: Զագը կտրած հաւի պէս մէկ դէս է վաղում, մէկ դէն, մէկ գլխին տալիս, մէկ ոտին: Էնքան է ծնկներին, գլխին լուփել, հարայ տուել, լաց էլել, մաղերը պռճոկել, երեսը շանգուել, կտրատել, որ էլ ոչ աչքումն է լիս մնացել, ոչ ջանումը՝ թաղաթ, ոչ բերնումը՝ լեզու: Էսպէս հէնց ձէնը փորն ընկած, շունչը կտրուած՝ ոտին գլխին էր անում, ինքն իրան ջարդում, գլուխը քարէ քար տալիս, եւ սուբութմիշ ըլելով, գետինը լիզելով, ֆառաշների ոտներն ընկնում, եւ ձեռը-

ները բռնում, որ թուրը խլի, իր սիրտը խրի . . .

Իսկ նրա դուստրը, Թագուհին, Թագուհին, աշխարհքի աչք Թագուհին, երկնքի տակին, գետնի երեսին անթառամ ծաղիկ Թագուհին, դրախտ, մանիշակ, անգին, անհատ, աննման Թագուհին սառել, փետացել, անշունչ, անլեզու մնացել է գետնի վրայ ընկած, երեսը երկինքը քցած: Շլինքը ծռուել, թուլացել, գլուխը շեմի էս կողմն է մնացել կախ էլած, մարմինը էն կողմն ընկած: Ոսկեթել մազերի կէսը մնացել է բարձր, որ նրա անմեղ երեսն ու դօշը ծածկի, կէսը էնպէս խճճուած, գետնի վրայ փռուել, քաշ է ընկել: Նազուկ ձեռները մէկը սրտի վրայ է թուլացած ընկած, միւսը հողի վրայ չորացած, տարածուած: Դամարը ցամաքել, շունչը կտրուել, հոգին երկինքն է վերացել:

Ահա ֆառաշները հրամայում են նոքարներին, որ ձիաները թամբեն, ետրազ ասպապ քցում են, թուրըները կապում ու կամաց կամաց մօտ դալիս, որ մօրն էլ, աղջկանն էլ վերցնեն, տանեն . . .

— Հէյ, ուր ես, իգիթ, ուր ես, Աղասի:

Յանկարժ՝ սե սե թուխ ամպերի միջից փայլող ու արար-աշխարհ լուսաւորող կայծակի պէս մէկ թուր պըսպղաց, ֆառաշների մէկի գլուխը գետնի վրայ ընկաւ ու սկսեց ղլուլլացնել, բլբլացնել ու պար դալ. դեռ սա ձէնը չէր կտրել, որ միւս ընկերինն իլ սրա հացը կերաւ, սրա մօտ գնաց: Եւ ինչպէս երկինք—գետինք դղրդացնող—սասանեցնող ամպի գոռոց լսուեց Աղասու ձայնը:

— «Իժսիքի որդիք, ձեզ ով ա զրկել էս տեղ, ում վրայ էք էգպէս կատաղել. ասենք, թէ հայր ձէն չի հանում, պէտք է նրան սաղ-սաղ ուտէք. աչքըներդ լիսը կը թռչնեմ էս սհաթը. կորէք, թէ չէ ամեն մէկդ ճուտի պէս առաջիս կթպռտայ, Քանի էս կուռս վրէս ա, դուք էստեղանց թել չէք կարող տանել»:


Ահա Աղասին ձեռները խաչել, փետացել, մնացել է կանգնած: Ինքը արնի միջին ծլծլում է, իսկ արտասունքը աչքերիցը գլգլալով վեր է թափուում:

— Էս երկրումը քո արեւը մէր մտաւ, Աղասի, քո
օրը խաւարեցաւ, քո ճրագը հանգաւ: Թոփի բերանն է,
քո ջանը: Քանի ոտքը խաղաղ է, քանի ջելաւը՝ ձեռիդ,
քեահլան ձին՝ տակիդ, ետրաղ ասպարը՝ վրէդ, քանի
բերնումդ շունչ կայ, ոտումդ՝ թաղաթ, փախիր, գլխիդ
ճարը տես: Սարգարի ֆառաշներին ես սպանել: Դրանց
արիւնը քեզանից կուղեն, դրանց տէրերը հիմիկ կատա-
ղել, իրանց միան ուտում կըլին. ի՞նչ ես փէտացել կանգ-
նել, էլ ո՞ր օրին ես մտիկ տալիս...

Դառած *) արջը վնչացնելով դուրս պրծաւ,
Սարեր, ձորեր սասանում են ձէնիցը,
Անմեղ գառը, ո՞ւր ես կանգնել դու անցաւ,
Քեզ կքրքրի, փախիր նրա ձեռիցը . . . » **)

(շարունակելի)

Թ. Աւայրէգեան



ԲԱԴԱ ԴԻԻՂԻ ԱՌԵՐՈՒՄԸ

(շարունակութիւն)

Ահա և միւս փաստաթուղթը *:

«Յարգելի պ. խմբագիր. Յառայեցի Թիֆլիսի քաղաքային
օստիկանութեան մէջ 6 տարի. այդ ժամանակամիջոցում, ես
երեւի համապատասխանում էի իմ պաշտօնին, որովհետեւ
իշխանութիւնից դողերին ձերբակալելու և գողացուած իրե-
րը գտնելու համար շատ յաճախ պարգև էի ստանում: Յետոյ
ինձ նշանակեցին Մէտեխի բանտի վերահսկիչի օգնականի ժա-
մանակաւոր պաշտօնավար, իսկ յետոյ Գանձակի գաւառի Գե-
տաբէկ աւանի պրիստաւ: Նոյեմբերի 14-ին ես դնացի Գան-
ձակ ներկայացայ գաւառապետին, և ստանալով նրանից 4-րդ
գաւառամասը ընդունելու հրամանագիրը, դնացի իմ ծառա-
յութեան տեղը: Նոյեմբերի 17-ին հասնելով Գետաբէկ, պրիս-

*) Կատաղած:

**) «Վերք Հայաստանի», եր. 82:

* «Մշակ» № 445—4906 Թ. Մայիսի 30. իսկականը տես Тиф-
лисский Лист. № 110. 28 мая.